



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 2 ՄԱՐՏ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստագործին Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստագործին զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚յիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 103

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս,
օրհնաբանէ անոր սուրբ անունը, ո՛վ իմ էութիւնս ամբողջ:
Օրհնաբանէ Տէրը, ո՛վ իմ անձս,
եւ մի՛ մոռնար անոր բոլոր պարգեւները:
Ա՛ն է որ կը քաւէ բոլոր մեղքերդ,
կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ:
Ա՛ն է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,
եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ քեզ:
Ա՛ն է որ բարիքներով կը լեցնէ քու կեանքդ,
այնպէս՝ որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:
Անիկա մեզ չի մեղադրեր մինչեւ վերջ,
յաւիտենապէս մեզի դէմ ոիս չի պահեր:
Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ,
այնպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,
որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը,
եւ չի մոռնար որ հողեղէն ենք:
Օրհնաբանէ Տէրը, ո՛վ իմ անձս:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈՐՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ՏԱՄԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:12)

Պատուիրանը կը շարունակուի: Հինգերորդ պատուիրան.

«Պատուէ քու հայրդ ու մայրդ, որպէսզի քու օրերդ երկար ըլլան այն երկրին վրայ, որ քու Տէր Աստուածդ կու տայ քեզի»:

Հեղաքրքրականօրէն եթէ երբեք 10 պատուրիանները առնենք եւ զանոնք դասաւորենք դէմ յանդիման, առաջին 5-ը եւ երկրորդ 5-ը, պիտի տեսնենք, որ առաջին 5-ը կը վերաբերի Աստուծոյ հանդէպ մարդուն ունեցած պարտաւորութիւններուն, իսկ երկրորդ 5-ը՝ մարդուն հանդէպ անհարին ունեցած պարտաւորութիւնները: Հարցը, սակայն 5-րդ պատուիրանն է, որովհետեւ երբ կ'ըսէ. «պատուէ քու հայրդ ու մայրդ»: Արդեօք այս պատուիրանը որո՞ն նկատմամբ պարտաւորութիւնն է, Աստուծոյ թէ մարդուն: Որովհետեւ եթէ երբեք մեր պարտաւորութիւնը մեր երկրաւոր ծնողներու մասին է միայն, այն ժամանակ կարգը կը խախտի, եւ կ'ըլլայ 4 եւ 6: Այսպէս սակայն խօսքը կը վերաբերի եւ երկրաւոր եւ երկնաւոր:

Երկրաւոր մեր ընտանիքը այն տեղն է, ուր անհարը կը պատրաստուի, կը դաստիարակուի երկնաւոր ընտանիքին մաս կազմելու համար: Ուրեմն, եթէ մենք վարժ չենք երկրաւոր մեր ծնողները յարգելու, ինչպէ՞ս պիտի կարենանք յարգել մեր երկնաւոր ծնողը: Յովհաննէս պիտի ըսէ. *«Եթէ եղբայրդ որ կը տեսնես չես սիրեր, ինչպէս կրնաս սիրել զԱստուած գոր չես տեսներ»:*

Այս պատուիրանը, սակայն ունի նաեւ լրացուից բաժին. **«որպէսզի քու օրերդ երկար ըլլան այն երկրին մէջ, որ քու Տէր Աստուածդ կու տայ քեզի»:** Հեղաքրքրականօրէն միակ պատուիրանն է որուն կատարած խոստում մը ունի, երկարակեցութիւն: Այս խոստումը կարելի է երկու իմաստներով առնել եւ մարմնական եւ հոգեւոր: Սա կը նշանակէ, թէ մեր ծնողներուն նկատմամբ յարգանքը պարճառ կրնայ ըլլալ, որ Աստուծոյ օրհնութիւնը ունենանք ներկայ կեանքին մէջ: Յաճախ մեր սպասումը մեր ծնողներէն նիւթական բաժինն է, ապա եթէ երբեք ծնողքս աղքատ եւ ի վիճակի չէ, ապա ունի մէկ այլ ուրիշ հասարակութիւն մը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ օրհնութիւնը, որ աստուածայինն է: Այնպէս ինչպէս Յակոբ պիտի ուզէր ունենալ այդ մէկը, ի գին խաբէութեան: Ուրեմն Աստուծոյ փրկած խոստումն ալ այն է, որ եթէ երբեք պատուենք մեր ծնողները, կ'ունենանք այդ աստուածային օրհնութիւնը, ոչ անպայման երկար ապրիլ իմաստով, թէեւ կրնայ նաեւ այդ բաժինն ալ ըլլալ:

Իսկ գալով հոգեւոր իմաստին, կը նշանակէ որ եթէ մարդ հնազանդ ըլլայ ու մնայ Աստուծոյ պատուիրանները պահելով ու պատուէ զԱյն, իբրեւ երկնաւոր ծնող, այն արեւն իր օրերը երկար պիտի ըլլան այն երկրին մէջ, որ խոստացուած է Աստուծոյ կողմէ, որ յաւիտենական կեանքն է: Ահա այս պատուիրանով Աստուած կ'ուզէ դաստիարակել Իր ժողովուրդը երկրաւոր ծնողը իբրեւ օրինակ ունենալու, եւ անոնց ընդմէջէն տեսնելու երկնաւորը, որ աղբիւրն է կեանքի: Այնպէս ինչպէս երկրաւոր ծնողները ծնունդ կու տան անձին, սակայն այդ բոլորի փրկիչը Աստուած Ինք է: Սա իմաստով, երբ կը պատուենք մեր ծնողները անով կը սորվինք պատուել մեր երկնաւոր ծնողը, եւ անով արժանի ըլլալու երկարակեաց կեանքին, որ ուրիշ բան չէ եթէ ոչ յաւիտենական կեանքի ժառանգութիւնը:

Այս պատուիրանը այսօր եւս իր տեղը ունի, որ սակայն, Առաքեալի իսկ բացատրութեամբ վերջին ժամանակներուն «ծնողներուն անհնազանդ» զաւակներ պիտի ըլլան: Աւելին Քրիստոս իր խօսքերուն մէջ պիտի յայտնէ ըսելով. «Զաւակները իրենց ծնողներուն դէմ պիտի ելլեն եւ սպաննեն զանոնք» (Մատթէոս 10:21): Ահա երբ կը հեռանանք Աստուծոյ պատուիրաններէն ինքնաբերաբար կ'ինանք այնպիսի վիճակի մէջ, որուն համար Աստուած Իր պատուիրանը կու տայ մարդուն, եւ այս պարագային Իր ժողովուրդին, որպէսզի այդ ժողովուրդը պարտաւորուի դառնալու Աստուծոյ սեփական ժողովուրդ, սուրբ ազգ եւ քահանայութեան թագաւորութիւն: